տասէրները «Նման Ա.յ.» ասացին, որոնք վարդապետական չորս «յեղնկաւն կտրլ. լինին», «զի որով կերպարանի Աճային, նովիմբ կերպրնի. եւ կտրլ. իմաստսրն.», «բարեաւն և գիտութիւն. և կարողութիւն», նոյնը և վարդապետը. ուստի և «Ը.ս. Պղատոնի իմաստասիրի. է նմանութի. Ա.յ. ը.ս. կրղւե. մարդկան»(*)։ Այս մի եւ նոյն մեթոդին հետեւում են եւ Նչեցու աշակերտներից ոմանք, ինչպէս Յակոբ Թագորցին է իւր վերեւ յիշուած աշխատութեան մէջ, բայց, մանաւանդ, Որոտնեցին իւր աշակերտ Տաթեւացու հետ։

Նչեցու նման մի գործն է և «Քարոզ մեծին Եսայեայ Նչեցւոյ արարել. վս. փոխման սրյ. կուսին. Ահաւասիկ տր. նստել. ի վր. թեթև ամպոյ եկեսցէ յեգիպտոս». սկս. «Պարտ է գիտել»(**)։ Քսանն և ինն հատուածի մէջ բացատրում է Մարիամին յատկացուած ածականները, իւրաքանչիւր հատուածն էլ բազմաթիւ աւելի մանր մասերի բաժանելով։

Նչեցու մի աշխատութիւնն է «Թուղթ վասն կարգաց եկեղեցւոյ եւ ժամուց, զոր ասացեալ է Եսայի վարդապետի ի խնդրոյ վարդապետաց Սիւնեաց եւ առաջնորդաց վանորէիցն, ոծասէր կրաւնաւորացն». սկս. «Զիմաստայեղծ եւ գովելի նամակս խնդրոյ ընկալայ ես թարմատար եւ տկար ոգի Եսայի»։ Արտաքոյ կարգի նորութիւնն չէ տալիս այս գրութիւնը, բայց որովհետեւ տպագրուած չէ եւ շատ քիչ է ծանօթ բանասիրութեան, տալիս ենք նորա համառօտ բովանդակութիւնը։

Անկարգութիւնները մտել են մեր եկեղեցու մէջ անիշխանութեան ժամանակ, մարդկանց փառասէր, անապարհ և հակառակող բարքերի պատճառով. «դիւրին էր մեզ ուղղել, եթէ գոյր մեր թագաւոր ոծասէր, իրաւադատ կմ. քհապետ. վրէժխնդիր աւրինաց և կարգաց»։ Եկեղեցին վերին Սիոնի օրինակն է իւր խորանով (σκῆνος), տաճարով և գաւթով. նա եռամասնեայ է իւր անցեալով, ներկայով և ապագայի կատարելութեամբ։ Խորանը, տաճարը և գաւիթը սրբութեան աստիճանաւորութիւն են ցոյց տալիս, տեղով և պաշտօնեաների ու հաւատացեալների կանգնելու կարգով։ Գաւթի նշանակութիւն ունի և սրահը, ուր մեղաւորները, դիւական ախտերով բռնուածները, եկեղեցուց արտաքսուածները «կան անդ դեգերեալք և կերակրեն զանձինս ապաշխարութեամբ և խրատով գրոց»(*)։

Առաքեալների, մարգարէների և վարդապետների կողմից կարգաւորուած են նոյնպէս աղօթելու ժամերը նախաստեղծների մեղանչելու և Տիրոջ չարչարանքի, խաչելութեան, մահուան և թաղման ժամերի համեմատ։ Կէս գիշերուայ և արեւագալի ժամերգութիւններն ու աղօթքները Քրիստոսի գալստեան եւ արթուն հսկողութեան նշաններն են Աստվածերգուի և Քրիստոսի պատուէրների համաձայն։

«Զայս սահման կանոնի աղաւթից ունի ամ. եկեղեցի. պահեաց և մերս յոլով ժամանակս յաւուրս ինքնակալ թագաւորաց մերոց». բայց հալածողների և հարկապահանջութեան զօրանալով, բոլոր կարգերն էլ չփոթուեցին, «փակեալ դրամք(s) և արտաքոյ ժամին զհռչակելի սբ. պատարագն մատուցանէին, առանց զգեստի և առանց արարողուե.»։ Աղքատութեան և ժամանակ չահելու պատճառով երկու երեք ժամերի աղօթքները միասին էին կատարում. «զի փութով ի մարմնական պէտսն դառնային»։ «Ի ժամանակս իշխանութե. մերոյ եւ խաղաղութե. զէ ժամն յեկեղեցին կատարէին», բայց արժանաւորները միայն, իսկ դաւթում՝ ապաշխարողները։ Այժմ անկարող ենք այն սովորութիւնը պահել «վասն աղքատութե. և խստասիրտ տերանց մերոց»։

Այս թուղթը որոշ հարցերի պատասխան էր և ոչ անարժէք իւր պատմական ակնարկներով. գրութեան ժամանակը ԺԴ. դարի երեսնական թուականներին պէտք է նշանակել, Նչեցու կեանքի վերջին տարիներին, երբ մոնղոլական իշխանութիւնն խսպառ մահմեդականացած, իւր մոլեռանդութեան պտուղներն էր ցոյց տալիս քրիստոնեաների նկատմամբ։

Նոյն ժամանակներին է վերաբերում Նչեցու մի վերջին գրուածք ևս. «Եռամեծի և անյաղթ սոփեստոսի Եսայեայ բազմաջան և բանիբուն վրդպի. սուղ ինչ պատճառ յղգս. ձեռնադրուե. ի խնդրոյ տն. Սարգսի»(**)։ Սարգիս եպիսկոպոսը Ստեփանոս–Տարաոնցիի յաջորդն էր, որ յիշատակուած տեսանք 1333 և 1337 թուականներին։ Այս մի և նոյն գրուածքն ունինք առանց «ի խնդրոյ տն. Սարգսի» վերտառութեան ու-

---

յաւան». սկս. «Բեր յետ ելանելոյ ի գագաթս լերանցս Աճաքնակ Սինէի..»։

Բայց և գրում էին մեկնաբանական կամ տօների հետ կապուած ճառեր, որ օրհնութիւններով էին վերջանում և եկեղեցու և հաւատացեալների, թագաւորի և հայրապետի, տեղական իշխանի և իրենց վարդապետ ուսուցչի անուան յիշատակութեամբ, մի տեսակ երախտագիտական արտայայտութիւն։ Այդպիսի հատուածներ տես Բ. 91 և Դ. 13, նաև 11 և 12։

(*) Դաւթի փիլիսոփայի, Սահմանք, նոյն հրատ. 144։

(**) Ձեռ. Էջմ. № 1948/1134, 457, նաև № 3318։

(*) Ձեռ. Էջմ. № 1523/1548, 337ա.։ Այս մտքերը արծարծում է և Եղեկիէլի մեկնութեան մէջ։ Ձեռագիրը գրուած է 1357 թուին, հեղինակի մահուանից միայն քսան տարի յետոյ. 383բ. «Բայց գրեցաւ սա ի թուականութես. հայոց :ՊԶ: ամին ի յանապատս, որ կոչի տր. Յովհաննիսի աթառակալի, զոր պահեսցէ տր. յս. երկար եւ խաղաղական կենաւք մինչեւ ի խորին ծերութի., ի թագաւորութեն. հայոց Կոստանդինոսի եւ ի հայրապետութե. տն. Մխիթարա, զոր յայսմ ամի փոխեցաւ առ Քս.»։ Ստացողն է «հեղահոգի Կր. քհն. խաչատուր». գրողն ու կազմողը Յովսէփ և Գրիգոր քահանաները։

(**) Ձեռ. Էջմ. № 94/3276, 99ա. միայն վերնագիրն է նշանակուած, առանց բնագրի։